«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 52/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 16.10.2019թ. ժամը 17:10

Համաձայն 23.09.2019թ-ին քաղաքացի Մարտին Սեյրանյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացիներ Մարտին Սեյրանյանի և Շուշանիկ Եղիազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հոկտեմբերի 16-ին, 16-00-ին ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը: «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝քաղաքացի Մարտին Սեյրանյանը
Մարտին Սեյրանյանի և Շուշանիկ Եղիազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու՝քաղաքացի Մարտին Սեյրանյանը
Մարտին Սեյրանյանի և Շուշանիկ Եղիազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. 23.09.2019թ-ին քաղաքացի Մարտին Սեյրանյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացիներ Մարտին Սեյրանյանի և Շուշանիկ Եղիազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում, ինքը որպես հանձնաժողովի անդամ ինքնաբացարկ է հայտարարում առաջարկում է քվեարկությունը կազմակերպել առանց իր ձայնի:
Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու հարցը դրեցին քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ստուգեց մասնակիցների ինքնությունը: Համաձայն կարգի դիմում բողոքը հակիրճ ներկայացնելու համար ձայն տվեց ներկա դիմումատու Մարտին Սեյրանյանին,ով ներկայացրեց նիստի մասնակիցների դիմում բողոքի էությունը և գործի վերաբերյալ իր փաստաթղթերը:Մասնավորապես դիմումատուն նշեց որ ինքը հանդիսանալով պարտապան իր և իր կնոջ ընդհանուր համատեղ սեփականության պատկանող անշարժ գույքը որը ԱՎԴ1/0001/04/16 սնանկության գործով դրված է վաճառքի կառավարչի կողմից 4-րդ աճուրդն է որ մեկնարկային գինը չի փոփոխվում,որի վերբերյալ բազմաթիվ անգամ տեղեկացվել է կառավարչին և պատասխան չի ստացվում և գինը չի իջեցվում,քանի որ եթե մեկնարկային գինը նվազեցվի,իր կարծիքով 5մլն. դրամից ներքև հասնելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ բռնագանձում չի կարող տարածվել այդ գույքի վրա որպես իր և իր կնոջ վերջին կացարան:

Դիմումատուն նշեց որ իր և կառավարչի հարաբերությունները մինչ այս դեպքերը միշտ եղել են հարգալից և կոռեկտ,բայց վերջին ժամանակները կառավաիչը իրեն չի ընդունում,չի լսում ընդհուպ հեռախոսով հայտնում է,որ իրեն այլևս չզանգել և չգալ իր նստավայր:Այդ փոփոխությունների պատճառները ինքը չի հասկանում և դրա համար էլ գրել է այս դիմում բողոքը: Դիմումատուն հանձնաժողովին ներկայացրեց կառավարչին ուղղված գրության լուսապատճենը:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղեցին դիմումատուին և ստացան պատասխաններ:

Հանձնաժողովի նախագահն կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝ քաղաքացիներ Մարտին Սեյրանյանի և Շուշանիկ Եղիազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանին,ով ներկայացրեց հանձնաժողովին գրավոր բացատրություն և կից փաստաթղթեր ,մասնավորապես կառավարիչը նշեց որ վերջին կացարանի դրամական շեմի վերաբերյալ չկա միասնական կարծիք որը դժվարացնում է այն պռակտիկայում կիրառել,որի վերաբերյալ տարբեր գործերով կան դատական վեճեր որոնք դեռ չեն ավարտվել,որոնց ավարտվելով կհստակեցվի կիրառման մասը:Այդ նկատառումներով իր կողմից մեկնարկային գնի փոփոխություն չի կատարվել և աճուրդները կազմակերպվել են նույն մեկնարկային գներով:Այժմ որոշակի պարզաբանումներ ստանալուց հետո կազմակերպվել է աճուրդ վաճառք արդեն տաս տոկոս մեկնարկային գնի նվազմամբ:

Կառավարիչը ներկայացրեց համապատասխան ապացույցներ և նշեց որ իր կողմից պարտատիրոջ հետ միշտ հարաբերություններում պահվել է կոռեկտություն և իր գործառույթները իրականացվել են օրենքներով սահմանված ընթացակարգերով և առանց կարգապահական խախտումների,իսկ դիմումատուի կողմից ներկայացված դիմումը պայմանավորված է այն հանգամանքով,որ նա խուսափում է կատարել իրենց կողմից տարբեր մարդկանց՝պարտատերերի նկատմամբ ունեցած դրամական պարտավորությունները:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին առ այն,որ կառավրչի և պարտատիրոջ միջև եղել են արդյոք անձնական հանդիպումներ մինչև քննարկվող դեպքերը և կառավարիչը տրամադրել է արդյուք վարույթից նյութեր պարտատիրոջը այդ թվում նաև աճուրդների վերաբերյալ:

Հ.Մարտիկյանը պատասխանեց,որ իր կողմից միշտ էլ ցուցաբերվել է պատրաստակամություն մանրամասը քննարկել վարույթի ընթացքում առաջացած բոլոր խնդիրները և այդպիսի բազմաթիվ քննարկումներ և փաստաթղթերի տրամադրումներ իրականացվել են:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարչի կողմից կատարվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ,56-րդ,76-րդ,80-րդ և 82-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերը և նրա գործողությունները միտված են պահանջների բավարարման համար անհրաժեշտ միջոցների կիրառմանը,իսկ պարտապան

հանդիսացող բողոքաբերի կողմից փորձեր է կատարվում,այդ թվում նաև դիմում-բողոքների ձևով ուղղորդել կառավարչի գործողությունները:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց անդամներին գնահատել ներկայացված փաստական հանգամանքները,որի շրջանակներում հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմում նշված փաստական հանգամանքները հիմնականում վերաբերվում են մի բանի որ կառավարիչը չի փոփոխել /չի իջեցրել/ հրապարակային սակարկությունների ընթացքում մեկնարկային գնային առաջարկը:Ընդհանրապես գույքի սեփականատեր պարտապանները միշտ դեմ են գնային առաջարկի հաճախակի իջեցեումներին քանի որ գույքի էժան իրացվելու դեպքում իրենց պարտավորությունները քիչ են մարվում և եթե երրորդ անձինք են իրենց քիչ գումար է հատկացվում,իսկ այս դեպքում հենց պարտապանն է բողոքում և ցանկանում որ իրեն համասեփականության իրավունքով պատկանող գույքի գինը իջնի, այսինքն ակնհայտ է պարտապանի նպատակները և բողոքի դրդապատճառները, որոնք հանգում են պարտապանի պարտավորությունների կատարումից խուսափելու փորձին և պարտավորությունների մարմանն ուղղված կառավարչի գործողությունների հակադրմանը:

Հաշվի առնելով «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը մեկնարկային գինը «... կարող է փոփոխվել»,իսկ օրենքի այդ կետի կիրարկումը կատարվում է աճուրդավարի կողմից,տվյալ դեպքում սնանկության գործով կառավարչի կողմից,այսինքն կառավարիչը մեկնարկային գինը գործից բխող հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող էր և իրավունք ուներ մեկնակային գինը չփոփոխել,որը և կատարվել է պարտատերերի շահերի պաշպանության մղումներից ելնելով:

Հանձնաժողովի անդամը հայտնեց.որ իր կարծիքով կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում և առաջարկեց կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը նշեց,որ ուսումնասիրելով դիմումը և ներկայացված փաստաթղթերը ակնհայտ է,որ պարատպան հանդիսացող դիմումատուն ձգտում է ամեն կերպ խուսափել իր հանդեպ ներկայացված պահանջներին բավարարում տալուց:Այդ նպատակին հասնելու համար ,իր կարծիքով խանգարող կամ վատ /արագ ու իր բոլոր ցանկությունները/ չկատարող, կառավարչի գործողություններին վերբերվում է վերապահումով և գնահատում է իր տեսակետից և իր շահերից:

Բայց կառավարչի գործողությունները մեկնարկային գնի փոփոխությունների վերաբերյալ պետք է լինեն թափանցիկ և վարույթի մասնակիցների համար ընկալելի ու հասանելի,այսինքն չկայացած աճուրդից հետո հաջորդ կրկնաճուրդի մեկնարկային գնի փոփոխված մեկնարկային գնի նշանակման մեխանիզմի վերաբերյալ աճուրդավարը ցանկալի կլիներ որպեզի ունենար հաստատված աճուրդի անցկացման կանոնակարգ,որը օրենքի պահանջ է և որտեղ էլ կարող էր արտացոլվել այդ մեխանիզմը:Հանձնաժողովի նախագահն նշեց որ նման իրավիճակներից խուսափելու և միօրինակ աշխատանքի ձևավորման նպատակով դեռ 06.08.2018թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կողմից մշակվել և ՍԳ կառավարիչներին է ուղարկվել Կանոնակարգի օրինակելի ձև,որը ուներ խորհրդատվական ուժ,բայց դրան հետևելու դեպքում ՍԳ կառավարիչը կապահովվեր .«Սնանկության գործով կառավարչի Վարքագծի կանոնագրքի» 3.4.կետով սահմանված «...իր կողմից իրականացված գործարքների հրապարակայնությունն ու մատչելիությունը »

Այս պարագայում սնանկության գործով կառավարիչ՝Հ.Մարտիկյանը իր կարծիքով իր գործառույթները կատարել է բարեխղճորեն և «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերը և միջոցներ է ձեռք առել օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունների,այն հրապարակային սակարկությունների իրացմումը կազմակերպման համար,քանի որ գույքի իրացումը պայմանավորված է եղել գրավի պայմանագրով և ապահովված պահանջատիրոջ պահանջի բավարարում տալու պարտականությունով և օրենքի պահանջով:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և առարկությունները,տվեցին և ստացան համապատասխան հարցեր և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1.23.09.2019թ-ին քաղաքացի Մարտին Սեյրանյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացիներ Մարտին Սեյրանյանի և Շուշանիկ Եղիազարյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան